Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական երիտասարդական գիտաժողով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ
Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

Մարո Մինասյան
«Հայկի սերունդ» ԵՀԿ

Հայ ազգային գաղափարախոսությունը

Հայ ազգային գաղափարախոսությունը, որպես ժողովրդի հարատևման ազգային ծրագիր, հին է այնքան, որքան ինքը՝ հայ ժողովուրդը: Մեր ժողովրդի համար ազգային գաղափարախոսության նպատակը եղել ու մնում է նրա բնական զարգացումը, անկախ հայրենիքը ամբողջական սահմաններով, պետականությամբ օժտված տեսնելու ձգտումը, հայ հոգևոր և նյութական մշակութային արժեքների պահպանումը՝որպես ազգի գոյապահպանման գործոններ:

Հայոց ազգային գաղափարախոսությունը որպես ամբողջական համակարգ, առաջին անգամ տեղ է գտել Մովսես Խորենացու «Հայոց Պատմություն» գրքում, որը ազգային գաղափարախոսության առաջին ձեռնարկն է, իսկ ինքը՝Խորենացին,առաջին գաղափարախոսը:

Ազգային գաղափարախոսության հիմնադրույթների անփոխարինելի շտեմարան են Գարեգին Նժդեհի հայացքները:Նա հայրենիքի կայացման մեջ կարևորում է ժողովրդի դերը. նա հայրենիքն օժտում է հոգևոր արժեքներով:Մեծ հայրենասերը փաստում է՝ հայրենիքը չի տրվում այնպես, ինչպես ժառանգվում է հայրենական հարստությունը. դա ձեռք է բերվում հայրենաճանաչումով, հայրենապաշտությամբ, նրան արժանի դառնալու ձգտումով, և ապա ավելացնում է. արժանի չես հայրենիքիդ, եթե այն չես դավանում իբրև գերագույն նպատակ,իսկ անձդ՝ իբրև միջոց:

Հայ ազգային գաղափարախոսության սկզբունքներն այսօր ավելի արդիական են. դրանց հիմքում ընկած են. հայ ժողովրդի ներուժը նրա զարգացմանը ծառայեցնելը, հայության համախմբումը, ազգային սովորույթների, ծեսերի, ավանդույթների պահպանումն ու օգտագործումը, հասարակության մեջ գոյություն ունեցող բացասական-երևույթների՝դավաճանության, կաշառակերության,օտարամոլության վերացումը, երիտասարդության պարտավորվածությունը՝ նպաստել ազգի և պետականության զարգացմանը՝ իր կարողությունների առավելագույն չափով:

Հայ քաղաքական միջավայրում սնկի պես աճող կուսակցությունների առաջ քաշած ազգային ծրագրերը պետք է ավելի շատ ունենան ազգային գաղափարախոսական ուղղվածություն՝ իրար վրա ցեխ շպրտելու փոխարեն, և նրանց հակասությունները վերաբերեն միայն հայանպաստ խնդիրները լուծելու մոտեցումներին:

Ազգային գաղափարախոսությունը կյանքի կոչելու, նրա հիմնադրույթներին ու սկզբունքներին հասարակության լայն խավերին ականջալուր դարձնելու մեջ մեծ է ազգային պետական քաղաքականության դերը:Իսկ պետականության բացակայությունը, կամ երբեմն խոշոր կայսրությունների կազմի մեջ մտնող ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի համար,որը կերտեց իր նորանկախ պետականությունը, ավելի է մեծանում ազգային ինքնագիտակցության, արժանապատվության սերմանումը, որը ծանրանում է հանրակրթական հաստատությունների ուսերին:

Պատմական խճճված անցքերը, որոնց միջով անցել է հայ ժողովուրդը, հրամայում են այսօր ունենալ համազգային կրթական համակարգ և մատաղ սերնդին տալ ազգային ոգով դաստիարակություն: Դպրոցում պետք է մեծ ուշադրություն դարձվի հայրենագիտական առարկաների դասավանդման հիմնախնդիրներին՝ այդ առարկաների դասավանդումը սերտորեն առնչելով հայ ժողովրդի պատմական հիշողության հետ:Իզուր չէ, որ մեծ գաղափարախոս Գարեգին Նժդեհը նշել է, թե դպրոցը պետք է լինի հայրենագիտության ամբիոն,տաճար, ուր մանուկը պիտի ճանաչի և սովորի սիրել հայ ժողովրդին ու երկիրը, նա է, որ հայ մանուկի մեջ պիտի քամի մեր պատմության բովանդակ գեղեցկությունն ու վեհությունը: Մատաղ սերունդը ճանաչելով պատմությունը,ամրագրելով ազգային գաղափարներ՝ ցանկացած պահի պատրաստ է բռունցքվելու և անկոտրում ուժ դառնալու, ինչն էլ պետք է մեր ազգային պետության ռազմավարական անվտանգության հիմքում լինի:

Սնուշ Լալայան
«Միասնություն» ՄՄԵԿ

Լեզուն ազգապահպանման կարեւորագույն գործոն

Հաղորդակցությունն ազդում է մարդ արարածի ամբողջ էությանը: Խոսքային կարողությունները բազմաթիվ ձևերով ներգործում են յուրաքանչյուր անհատի զարգացման վրա: Որպես հասարակության ներկայացուցիչ յուրաքանչյուր անձնավորություն հարաբերվում է հասարակության լայն զանգվածների հետ և հաղորդակցվում այն լեզվով, որը հասկանալի է կողմերի համար: Ելնելով տնտեսական, հասարակական, սոցիալական և այլ պահանջներից հանրության որոշ զանգվածներ պարտադրված են լինում կատարել

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

ПОЛИГРАФ